



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11946

891. 99

3 - 26

1901

487.

9N(59)
2-

Ս. ՀՈՅԿՈՒՆԻ

56

Բ Ե Ր Ե Կ Ղ Ա Հ
ԵՒ
Ա.ՆՈՒՇ ՇԱՀ



(Մոկաց բարբառով ժողովրդական վեպ)



Վ.Ա.Վ.ՍԵՆՍՈՍ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1901

891.99
Հ-26

2003

37688 ա.հ.

891.99

7-26

այ

ԲԱՐԱԿ ԵՄՅ ԵՒ ԱՆՈՒԹ ԵՄՅ

(Մոկաց բարբառով ժողովրդական վեպ) *.

Մէկ թաղեաւուր՝ կէր.

Էդ թաղեաւուր ամին օր նէջըը կէրթէր.

Մէկ խալիւուր՝ անու ճամբըը մէջ նստած էր. Ամին օր յիւր էրկու մատ թաղեաւուրըն նշանց կտէր:

Օրէն մէկ թաղեաւուր էսայ.

Մէկ խալիւուր՝ մանչ իմ ճամբըըն նստած ի, էս ինչ կէրթամ նէջըր. Ամին օր յիւր էրկու մատ ըզը նշանց կտայ:

Ասըըն. — Ինչ անիկ էրկու մատ նշանց կըտայ, դիւ իրիք մատ նշանց աու, ինչ ան իրիք մատ նշանց կտայ, դիւ չուրս աու, ինչ ընիւքի կտար:

Առաւուտուն թաղեաւուր խընդ խարըը ձիաւուր առըց, դինաց նէջըր.

* Ասած է Մոկաց Գինեկանց գիւղացի Զատի:

Մոկաց բարբառին մէջ ձայնային խտերն ընդհանրապէս (իչ բացառութեամբ) փոխուած են ե-ն՝ ի, ո-ն՝ ու, ու-ն՝ ու, ի-ն՝ ը, է-ն՝ ը, նաև կ, ք, գ խտերէն ետէ կող ա-ն ետ-ի կը փոխուի:

Дозволено Цензурою 21 Августа 1901 г. г. Тифлисъ.



1299
42

21285-60

Գինաց խալաւուրն մատացաւ .

Խալաւուր յիւր էրկու մատ նշանց խոու .

Թագեաւուր իրիք մատ նշանց խոու .

Խալաւուրն իրիք մատ նշանց խոու .

Թագեաւուր չուրս խոու :

Խալաւուր թագեաւուրն էսաց .

— Թագեաւուր, նստը աս տե .

Էսաց. — Բի մէ դարքըմ (պատահար, փոք-
ձանք) կիւզեայ, դիւ փուքըրի ժամանակի կուզըս,
թէ խալաւուր ժամանակի :

Էսաց. — Օր դեայ, իս միայ կուզիմ :

Խալաւուր դարձաւ, էսաց .

— Գիւ կուրճ կուզիս, թը ման, թը խեղեղ :

Թագեաւուր շատ միտք էրաց, էսաց յինք —
յինք. — Թը կուրճ ուղիմ, կտորճ մարդիւր տե սպա-
նին ալչախ (տկար) մարդիւր. թը ման ուղիմ,
ամին տը մեռնին, Էսաց. — Ես խեղեղ կուզիմ :

Խալաւուրն էլ էսաց. — Մտէ աթոռ տի
նստիս, էրկըթէ սուֆրէն (սեզան) խաց տ'ու-
տիս :

Թագեաւուր առջ յիւր խընդ խարիւր մարդ,
գինաց, Էրկինք ամպից, կարկուտ էրի, էլաւ խե-
ղեղ, խընդ խարիւր ձիաւուր տարաւ .

Թագեաւուրը յիւր ձին էլ տարաւ խեղեղ :

Խեղեղ առջ, գինաց, գեղիմ, դիմաց դիւս
խանից. Թագեաւուր դիւս էլաւ, ձըն տարաւ խե-
ղեղ .

Թագեաւուր գինաց իրեցու գում (գում) .

Յիւր Թագեաւուրական խալաւքիւր իխան,
մէկ պուտիկ մէջ էգեր, սալ վիբուց, բաշ (ճա-
կատ սպիտակ) իզան տակ խուրից, ըէնճպրնակ

(մշակահան) խալաւ խագեաւ, գինաց, էլաւ տէր-
տըրուջ տղայ :

Տէրտէրն էլ յիւր աղջկի պտակից վրէն :

Շատ մ'նաց, քիչ մ'նաց, օրէն մէկ կնկեան
էսաց .

— Կնկի, իս կերթամ դաշտ, մուլախ կենիմ
(արտ ջրել վարելէ վերջ, որ անմիջապէս սերմա-
նեն), ըզի խաց շիւտ բերիս :

Տղէն էլաւ գինաց դաշտ :

Աը Թագեաւուրը քեաղաք ինչ էրըն :

Խընդ խարիւր ձիաւուր տըլվըթը խաւք (թա-
դաւորական Թռչուն) թալըն :

Խաւք իրի-երի, Թառաւ վար իրեցու պա-
տըն :

Էրէց խանիցըն, տանջիցըն, ասըցըն .

— Գիւ մի Թագեաւուր պախիւր իս :

Էսաց. — Իս Թագեաւուր չիմ տեսի. իս ձի
Թագեաւուր չիմ պախի :

— 2է, գիւն իս պախի մի Թագեաւուր, օր
գիւ չպախիւր, խաւք վար քիւ դռան չիւ Թառը :

— Աստուծու սերուն ըլնը, իս ձի Թագեա-
ւուր պախիմ, ինչ տէնիմ :

Իրեցու աղջկի մառացաւ յիւր մարդիւն
խաց տանը, Իրկուան ժամանակ մըտ ընկեաւ,
խաց տարաւ .

Տխաւ դաշտ մուլախի, մ'նացի մէկ նստելիւ
տեղ :

Տղէն էսաց. — 2է, քի ասըցը, «խաց շիւտ
բի», էս յերկին էլաւ, դիւ նճը խաց կը բերիս :

Էսաց. — Ինչըն տը խաց բերէր (բերէի).
խընդ խարիւր ձիաւուր տըլվըթը խաւք Թալաւ,

Եկե՛ք թառը իմ խոր դռան վերէն, իմ խէր բռնած
կը չարչարըն, կասըն. «մի թաղեալուր պակսեր
ես». խոնէլ մառացայ, քի խաց չըբըր:

Անրկ նստաւ էդ չուր (չոր) տեղ, մարդն էլ
նստաւ կնկեան դիւք. խաց իդի մանչ բակին,
կըբաւ:

Է՛ն էր, ինչ ասըց. «մտէ անթող տը նստիս)
էրկըթէ սուրճէն խաց տ՛ուտիս»:

Խաց կերաւ, պրծաւ, կնկեան էսաց.

— Կերթաս դում. բաշ իդան տակ սալմ,
կայ, էն սալ կը վերելցիս, սլաուկմ՝ էդա սալը
տակ խորելի ի տեղէն կը խանիս, բերիս. մէջն օծ
կայ, քի կը կծը, բերան չըանաս մինչեւ՝ մա ըզի
բերիս:

Անրկ գինաց, պտուկ էխան, առըց իբի,
զասնու տեղէն (ճեռելէն) լիթալ, էսաց. — «օձեր
ձի չիծին»:

Պուտուկ կուտաւ, թաղեալուրահան շու-
րեր փէլք իտու, կնրկ էսաց.

— Մարդիկ, Աստուծու սիրուն ըլնը. ո՛ր
տեղ էրթաս՝ ընձէլ ասնըս խա քի:

Անրկ տղեօլ էր, քեառասուն խոնտքեարի
բախ ձեռ իդի, էսաց. — Անրկ, էսա բախ կառ-
նըս, կիւղեառ, ըզի խանիս:

Անրկ բախ առըց, իկաւ, խասու գեղ, տե-
սաւ թաղեալուր խեծը՝ տէրթայ:

Թաղեալուր էսաց. — Զիմ՝ բերէք, իմ կնրկ
թուղ խիծնը:

Զին բերըն, թաղեալուրը կնրկ էջաւ, տը
խիծնէր, եամիմ՝ կնէ գինաց. էսաց թաղեալուր.

— Բարակ շախ ի, ըզի փուծ չկարը (օդուս

չանէր), թուղ, տղէք, էրթանը:

Թաղեալուր գինաց յիւր տեղ:

Էդ կնկեան տղէմ՝ իլաւ, տղը անուէն իդի
Բարակ Շախ: Տղէն միծացաւ:

Տղէն, պառուու տղէն կըռուան, պառաւ
էսաց. — Կո՛ւղ զքի տանը, դիւ աղէկ ըլլէր, քիւ
խէր զքի իրան խիտ կտանէր:

Էսաց. — Պա՛ռաւ, իմ խէր տէրտէրնը, իմ
խէր յիւր գինաց, ըզի չտարիւր ի:

Էսաց. — Տէրտէր քիւ քեարխէրն ի (քեռու
հայր), քիւ խէր չի:

— Իմ խէր վո՛ւվնէ, էսաց:

Էսաց. Գինան, քեօ մօր էսան, ըզի աւղէ ա-
դանձ կըպը (աւաղէ ադանձ կուղեմ). քիւ մեր
ինչ կը բեօլի, էսան. ձեռ զարկ մէջ, լըց իմ փէշ,
խէմ անկուշ ի, թէ չէ: Գիւն էլ զձեռ բռնըս,
կասըս. — իմ խոր կըսան կէնիս՝ էրայ, չիս էնի,
քիւ ձեռ չիմ թուղնը, կերիցիմ:

Տղէն իլաւ գինաց տուէն, էսաց.

— Մարէ՛, իս քիչմ՝ ադանձ կուտիմ.

— Կուղիս, քիչմ ցուրին կը բերիմ, բէօլիմ.

Էսաց. — Իս ցուրնէ չիմ ուղի, իս աւղէ կու-
ղիմ, ասըն «աւաղ անիւշ ի»:

Մէր էսաց. — Կըլլիմ, կը բէօլիմ.

Մէր իլաւ բէօլից.

Տղէն էսաց. — Մարէ՛, ձեռ զարկ մէջ, լըց
իմ դուք, խէմ անկուշ ի:

Տղէն մօր ձեռ բռնից, էսաց.

— «Իմ խոր կասէն կէնիս՝ էրայ՝ չըս էնի,
կը թուղնիմ քիւ ձեռ իրիցի»:

Էսաց. — Իմ ձեռ թուղ, քիւ խոր կասան

էնիմ: Չեռ իթուզ, մէր կասէն էրաց:
 Բարակ շախ յիւր քեարխօր էսաց.
 —Իլի՛, ըզը քեանիմ խատ ուսիը բի.
 Տէրտէր յէլաւ, մէկ քեանի խատ ուսիը
 իբիխտու տղըն: Տղէն էլ էդ ուսիը կտրից, էրաւ
 սաչմա, ճէպ իլից, էսաց:
 —Չիմ ըզի խամար բի:
 Տէրտէր իլաւ, ձիմ՛ էլ իբի:
 Տղէն իլաւ, ձին էլ խիծաւ, զինաց խօր
 քեաղաք: Խօր սէյիսն (ձիապան) իբի յէռջիւ.
 Էսաց տղէն: — Բե՛օֆ, Աստուած քիւ տուն
 աւըը. խուտու մեռանք քինէ, ա՛ռ իմ ձին, տա՛ր,
 կապը.
 Սայիս էսաց. — Կը տանիմ, կը կապըմ:
 Էսաց. — Ի՛նչ տը տաս, իմ ձըն ուտը:
 Էսաց. — Խուտ տը տամ, յարդ տը տամ,
 գեարի տը տամ ուտը:
 Տղէն էնքան իզմրիկ սայիսին, սայիսը լէշ
 (մարմին) կապուտացաւ:
 Էսաց. — Դիւ խուտ տը տաս, յարդ տը
 տաս, գեարը տը տաս, իմ ձըն ուտը ...:
 Էսաց. — Աստուծու սիրուն, ի՛նչ տամ, քիւ
 ձըն ուտը:
 Տղէն ձեռ իզար ճըպ (զրպան), լըվըմ ուս-
 կը սաչմա էխան, էսաց.
 — Իմ ձըն գ՛աղիւց տ՛ուտի, չ ...:
 Սայիս զինաց, Թաղեաւուըն էսաց.
 Թաղեաւուը էսաց.
 — Գինա՛, կանչը էսա տեղ, խէնը, ի՛նչ մարդի:
 Սայիս իլաւ, էսար.
 — Թաղեաւուը զըը կանչը:

Տղէն իլաւ, զինաց մա Թաղեաւուը:
 Դիւռ իրաց, էսաց. — Բիւլֆ—բիֆ, Աս-
 տուած ձի տուն աւըըը, խտու մեռայ:
 Մարդ ձէն չէխան, Թաղեաւուը էսաց.
 — Ա՛յ որդի, վսւլ խաց ուտը, ջիւը խըմը,
 խտա կիւղեայ մօտէն:
 Տղէն էսաց. — Աուլ խաց ուտը, ջիւը խըմ՛
 քեամի կերթայ մօտէն, ապա գիւ քեառտուն
 խիւնտքեարի բախ կը դնիս տղեօլ կնկեան ձեռ,
 աճէ՛պ է, քեամի կերթայ մօտէն, դիւ կասըս.
 «Բարակ շախ ի, ըձի վուճ չը կտուը»:
 Թաղեաւուը տեղէն կանգնաւ, զինաց տղի
 գլեօխ պագնից: Տղէն էսաց. — Ահա՛, իմ մէր կը
 բերիս՝ բի, չբերիս, քիւ քեաղաք կաւրիմ:
 Խրկից մէր իբի, ժամանակիմ վրէն ընցաւ:
 Էդ տեղվէ գիտմ կերթէր. տղէն էլ զինաց
 վար էդ գիտըն կարմունջ կապըց, Ա՛ր մէկ կեր-
 Թէր կարմնջէն տ՛անցնէր, կը զարկէր, չիւ Թուղի,
 կասի.
 — Իս կարմունջ կապիբիմ, դիւ վերեւէ՛ն
 տ՛ընցնիս: Կերթէն կտէն գիտ՝ չիւ Թուղի.
 — Իս կարմունջ կապիմ, դիւ կերթէք, կտէք
 գիտ, գիտ ձի տանը, ձի մէղք ընկը իմ վըզ:
 Մըընչ կը Թուղնէր կարմնջի վրէն էրթէն,
 մըընչ կը Թուղնէր էրթէն գիտ:
 Գեացըն Թաղեաւուըն հատնիցըն.
 — Քիւ տղէն մէկ կարմունջ կապիբի. Աս-
 տուած անու խէըն ընդունելի էնը, կերթանք
 կարմնջի վերէն ընցնիսք, չթուղը, լաւ կարմունջ
 իրան ր, Թուղ չթուղնը, կերթանք, կտանք գիտ,
 էլմ կը զարկի կասը՝ «դիւ կտաք գիտ, գիտ ձի

տանը, ձի մեղք ընկնը իմ վրդ, էկէք, կարմնջի վերէն գեացէք»:

Թագեաւուր էսաց.— Գեացի՛ք, ասէք թուղ էրթայ, կուրիսի, չըմ ուզը:

Իկնն, ասըցըն.— Քիւ խէր կասը՝ «ան տղէն չըմ ուզը» թուղ էրթայ, կուրիսի»:

Տղէն էլ ինչ էղաւ.— ձըն խեծաւ, գինաց:

Թագեաւուրն էլ հաշ վար յիւր իրի, էսաց.

— Իս ուրիշի խուսք իրի. տղէն գինաց, կուրիսաւ:

Թագեաւուրն էլ ինչ էրաւ. յէլաւ խընդ խարիւր ձիաւուր խրիկց տղը յիսիւ.

— Կերթէ՛ք, կան կգէք, իմ տղէն գնալնէք, կը բերը:

Խընդ խարիւր ձիաւուր յէլան, յիսիւէն գեացըն: Էդ տղէն էլ գինաց մէկ դաշտը մէջ, տիսաւ պաղչէմ՝ կայ էդա դաշտը մէջ, բերդմէլ էդա դաշտը մէջ շնած ա, էսաց.

— Իս գըտիմ, էսա պաղչէն (պարտէզ) անտէր չի, տերով ի:

Տղէն էդա պաղչէն ընցաւ, գինաց յէռջե չնարը ծառը. ձըն կապից չնարը ծառ, կծկաւ, նոտաւ էդա ձիու տակ, մինչիւ լուտացաւ:

Ադ խընդ խարիւր ձիաւուր ինչ կիւղեան, էդա պաղչէն կը տանան, ձիանք կառնըն, կերթան էդա պաղչը մէջ:

Սիւ Գիվը կելը, կը տեսնայ խընդ խարիւր ձիաւուր, կէօ դաշտը մէջնին. իկաւ ձիանք տարաւ, էրաւ նեղ գումը, էդ խընդ խարիւր մարդն էլ ամեն եարալու էրաւ, ո՛ր ձեռ կուտուից, ո՛ր գլեօխ կուտուից, ո՛ր գոխ կուտուից, ո՛ր սաք կուտուից:

Բարակ շախ յիս դարձաւ, իկաւ պաղչը տակէն տ՛ընցնէր, տիսաւ խիծուց (հառաչանքի— հեծկաւանքի ձայն) կգէայ, ըրըչից, տըսաւ իրան խօր մարդերնին, էսաց.— Ադ ի՛նչ իլի ձի.

Էսաց.— Աստուած քեօ տուն աւըըր, քիւ խէր գմի խրիկց քիւ խաւէն, իկանք, աս տի մթնաւ մի վերայ, մինքն էլ էսա պաղչէն տըսանք, էկանք պաղչը մէջը, սիվ գիվ իկաւ, գմի ամին էլ եարալու էրաւ:

Բարակ շախ կանչից, էսաց.

— Քեաֆի՛ր գիվ, իս արտէ ընկիմ, գիւ գեան, իմ խօր մարդեր եարալու ինիս.

Իկ իկաւ պաղչը մէջ:

Բարակ շախ, գիվ առըն յիւար:

Թօղ (վոշի) իլաւ, էրեգական իրիս ըռնից. մինչիւ իրիկուան գեախին կառւան:

Բարակ շախ գգիվ իթալ գեաըն, թուր քեչից, գլեօխ աը կարէր, գիվ էսաց.

— Աստուծու սիրուն ընը, ըզը չսպանիս. քեանի ջուր կայ իմ յաչքեր, իս բլիմ՝ քի խղմէթ-քեար (ծառայ):

Էդա գիվու քիւր կայնիկը պաաը վերէն, էսաց.

— Բարակ շախ, գիվ բէթաղը ի, նալմ՝ կախէ էն ախիջէն, մէկ էն ախիջէն, ձեռ կաայ նալլը, զքի չսպանը:

Բարակ շախ իթուղ, գիվ իլաւ կայնաւ, գեացըն տուն, գիվու քիւր առըց:

Գիվ էսաց.— Մէկ դարդ ըզի եղի գեաըն, դարդմէլ իմ քիւրնի առը, էսա էրիու դարդ.

Էսա էրիու դարդ ըզի աը սպանը, էսաց.

Դիվ ամին ժամանակ կերթէր նէջեր կերերէր
կուտէն:

Օրէն մէկ դիվ գինաց, դիվու բարձիւր չիւր
վերուցն: Բարակ շախ իլաւ, բարձիւր վերուց,
տիտաւ մէկ պղտիկ բանալիքմ՝ էնա բարձը տակ-
նէր. բանալիք առքց, գինաց, պղտի գելում՝ կէր,
բաց էրաւ, տեսաւ էրկու սուրաթ (դէմք—պատ-
կեր) կայ տակը, հաշ գինաց, ընկեաւ շիմուց վե-
րէն: Իրեկուան սիվ գելվ իրի, քելուրջ էսաց

—Յիւր ի Բարակ շախ:

Քիւր էսաց.— Կէս օրին գինացը, չէկի:

Դիվ գիտցաւ սուրաթներու գելու բացիւր ի,
իլաւ գինաց, քելըն էլ գիվու իտիւէն գինաց:

Դիվ տըսաւ սուրաթներու գելու բացիւր ի,
հաշ գեացիւր, ընկի շիմուց վերէն:

Թուր քեշից, Բարակ շախ ալքսպանէր, քելը
իկաւ ան տի, էսաց.

—Պէճադդ, գըի կսպանէր, դիւ ասըքը.—
«ըզի չսպանըս, քեանն ջիւր կայ իմ յաչքեր, իս
բլլեմ քել խղմէթքեար»:

Քիւր չիթուղ սպանէր, Բարակ շախը սըբտ
մաթից, ջիւր թալից յերես, յիւշ իկաւ վերէն,
ագախաւ (դդաստացաւ), իլաւ վեր.

Որ իլաւ վի, էսաց դիվուն.

—Էսա սուրաթներու տէր բերես՝ բէ՛, չբե-
րես՝ քի կսպանիմ:

Էսաց.— Իս գըտիմ, ըզի տը տաս բունիլ:

Յերկուն դիվ կրակ վառըց:

Էրկու քիւր յիլան, տիտան կրակ կը վառըն,
կուժմ՝ ջիւր, բիււ մէլ բըլըկու ասըդ ձեւ
բունից, բուում էլ ծաղըկ մէկէլ քիւր բունից ձեւ.

ջիւր թլըքն, էկըն: Որ էկըն, դիվուն մատացան,
դիվու հեաշ գինաց, ընկեաւ ադ տեղ: Զգիվ
բունըքն, կսպըքն, առըն տարըն:

Որ տարըն, տիլոդըքն, ճրագ դըրն վար
միջքուն, քերկեախ քեշըքն.

Մէկէլ յըրկուն Բարակ շախ իլաւ, կրակ
վառըց, Քիւր յասըքն մէկ մէկու:

—Աս վո՛ւվ ի կրակ կը վառը:

Իլան էլմ՝ ջիւր թլըքն¹, էկըն:

Էկըն Բարակ շախ մատացան:

Բարակ շախ չըբըշից անիւնց յերիս:

Ինչ մատացան, ձեւմ իթալ անու փուղ-
պատ, մէկ իթալ անու փուղպատ, բունից, էսաց.

—Էրկու բերիմ, կուտամ յերար, զձի կմեռցնիմ.
Անունք էլ ասըքն.

—Աստուծու սերուն, զմի թուղնիս, ինչիս
կուզըս, մենք ան տեսի էնիւք քի խիտ:

Թուղ խոււ, իլան գեացըն:

Բարակ շախ գինաց, տիտաւ, զգիվ տիլոդ-
ցըքած՝ ճրագ դըրած վար միջքուն:

Էսաց.— Ադ ինչ կէնք, միդք չն՝:

Առըն.— Ինչ միդք ի. դիւ ճրագէն լիւս կը
խէք, միւք անու ... խէնք (նայենք):

Իլաւ զգիվ արձկից, իթուղ:

Էսաց.— Դիւ, պղախի քիւր տ՝առնըս, թը
մի՛ծ քիւր:

Էսաց.— Պղտիկ քիւր առնըմ, ըզի կսպանը,
մի՛ծ առնըմ, գէշ ի: Էսաց.— Մի՛ծ քիւր:

1. Զար կը բախիլն որ հակառակօրդին աչն ըրին
առնէր, աղկան երեսը տեսնէր, աւոքը գնար:

Էսաց.—Քիւ բերան հոռտնիւ մեծ, քեւը չուզիր, պղտիկ քեւը ուզիր, քի ա՛քսպանի:

Էսաց.—Գարտմ ըզի զի գետըն՝ ադ մէկ, մէկն էլ հախից իմ ահնջէն մէկ նալ՝ ադ էրկու. մէկն էլ իմ քեւը առըց՝ ադ իրիք. մէկն էլ գէշ հնրի խոռ ըզը, խորոս առըց անու՝ ադ չուրս: Չուրս դարտ ըզի ա՛քսպանը:

Բարակ շախ էսաց.—Արի՛, իս, զիւ ուխտմ էնընք. թը քի լա՛ճ իլաւ, ըզը աղջիկ՝ իս իմ աղջիկ տամ քիւ լաճուն, թը ձը լա՛ճ իլաւ, քի աղջիկ, զիւ քիւ աղջիկ տաս իմ լաճուն:

Գիւլ էսաց.—Շատ աղէկ կըլնը:

Էրկրլիկ կընկտիքն էլ իլան աղետի:

Իննը ամիս, իննը օր ինչ թմաւ, զիվուն Աստուած աղջրիմ խոռ, Բարակ շախին էլ լաճ:

Էդա աղջրի, էդա լաճ սիրունն յերարիւ վերէն:

Գիւլ յիւր աղջկան անիւն իզի Վարդ խանում: Բարակ շախն էլ յիւր լաճու անիւն իզի Անուշ շախ (Շիրին շախ):

Մէկ ժամանակ վերէն ընցաւ:

Աս զիվ էսաց.—Էսա իլաւ խընդ դարտ. աս խընդ դարտ ըզը արսպանէ, բերիմ, աղջրի կուրիսընիմ:

Իբի զութիմ՝ շընից, աղջրի մէջ իզի, բերան փահըց, տարաւ, իթալ սիլ ծովու վերէն, էսաց.

—Սիվ ծովի, քինէ կուրիմ, տանըս Չիչանց թաղեաւուրու լաճու խամար:

Սիվ ծով զաղջրի առըց, տարըց Չիչանց քաղաք:

Աղջրի գինաց, աղէն զայնֆիսցաւ:

Տղէն էսաց խօր.—Աղջրի չկայ, յիւր է: Բարակ Շախ զիվուն էսաց.

—Աղջրի ի՛նչ իս իրի:

Գիւլ էսաց.—Աղջրի էրկու տարրկան մեռեր է:

Տղէն էսաց.—Չ՛մեռերի, սիւտ կասը:

Տղէն յօրէն մէկ էսաց.—Տ՛երթամ յիաիւ, հան գետմ:

Տղէն իլաւ, գինաց սիվ ծովու բերան.

Աղջրի իլաւ արը մօտ, էսաց.

—Վաղը Չիչանք (քաջքեր) կիւգեան, կերթան զեղրունք բերըն, իմ մարդ (քաջանց թագաւորի որդին) բրինտար է, դեղ բերըն, փրացըցին, զի պասկին վերէն. էսաց, զիւ վաղ կիւգեաս աստեղ. շընը օր քնիս, Չիչանք գեան, էրթան, իս անիւնց իտեէն կիւգետմ աս տեղ, ըզի առ, էրթանք:

Տղէն էկաւ յիւր տեղ, աղջրին էլ գինաց յիւր տեղ, Առաւուտուն աղէն էլմ՝ իլաւ, գինաց ծովու բերան:

Շատ նստաւ ան տե, մարդ չարտաւ, քիւն յելաւ վերէն, քնաւ:

Չիչանք էկըն, գեացըն:

Մնաց քաչալմ՝, կաղմ՝, կուրմ՝:

Էդա իրեք յետէն էկըն. էկըն աղին մատացան: Էդա կուր էոաց.

—Էսա ի՛նչ մարդ է, էոա տեղ պառկի.

Ասըցըն.—Միք ի՛նչ գըրախը, մէկ մարդ աս տե պառկի.

—Ադ մարդ մի թագեաւուրը խարսի սիրուզն է, մի թագեաւուրը խարս կիւգեայ աս տե, առնը, էրթայ:

Քեաչալ էսաց.—Չտղէն սպանինք.

Կաղ էսաց.—Թլինք ծով.

Կուր էսաց.—Չէ՛, անիւ մեղք չընք իցդի մի վրդ, քիւն առնընք, տանընք. յիրիկուան դեանք, քիւն տանք ինե, էրթանք, աղջըկ կիւդեայ աս տե, տղէն չակախի, թո՛ կտայ, կերթայ:

Անիւնք յիւան, քիւն առնն, գեացըն:

Յիրիուեն էկն, քիւն տուըն ինե:

Աղջըկ էկաւ անտեղ, տիտաւ տղէն քնած ի, ինչխ էրաւ, չակախաւ: Թիւղթմ՝ գրից, էսաց.

—Գիւ էրախայ իս, դիւ ձը վուճ չըս կտուր (օգուտ չես տար). աս ճանիւր կառնս, կերթաս քի խամար կը խաղաս, իմ յիտեէն չգեաս, դիւ ըզի չըս գնանի. Թը իմ տեղն էլ կը խարցնիս, իս Չիչանց թագեաւուրը քեաղեաքն իմ, դիւ ըզի չըս կէրի բերը:

Աղջըկ իւաւ, դինաց, Չիչանք էկըն, գեացըն.

Էդա իրեք էլմ՝ յիտ մնացըն, յիտուց էկըն, տղըն մատացան:

Էդա կուր էսաց.—Կը խէ՛ք. իկեր, ըսգուն պագնիւր, ըսգուն գրիկիւր ի, չիմացիւր ի, թուղ տուիւր ի, գեացիւր ի: Քիւն առնն, գեացըն:

Գիշերուան մէջ ակախաւ, տըսաւ գիշեր ի. ձեռ խուռ յիւր ճըպ, տըսաւ ճան կայ ճըպ, ծէրմ՝ թիւղթ. թիւղթ իրաց յիս, տըսաւ գըրուած ի, կարգաց.—«աղջըկ իկի մօտ, ինչ իրի» չակախի, ասիւր ի, իմ յիտեէն չգեաս, թը իմ տեղն էլ կը խարցըցիս, Չիչանց թագեաւուրը քեաղաքն ի»:

Լիւսցաւ, տղէն դարձաւ, իկաւ յիւր տուն. խօր էսաց.—Տե՛րթամ յիտե աղջկան:

Խէրն էսաց.—Որդի՛, մէ՛րթայ. ալ դիւն չըս տեսնայ, չըս կէրի բերի ան աղջըկ:

Էսաց.—Չէ՛, տ՛երթամ խուէն:

Տղէն էր, իլաւ ձըն խիծաւ, դինաց՝ թէ աւուրմ՝ թէ էրիու աւուր ճանապարհ (ճանապարհ և ճամբաղ միանգամայն կը գործածէ Չատիկ). դինաց, դինաց սարը մէջ, տըսաւ էրիու դիվ ան տե կը կուրն—սիվ դիվ, սըւտակ դիվ: Ինչ սիվ կը դարկը սըւտակ դիվուն, սըւտակ դիվ կը բարականայ, կըլէք քանց լարան. ինչ սըւտակ դիվ կը զանը սիւ դիվուն, սիւ դիվ կուռը, կըընչ քանց սարմ՝:

Տղէն էսաց.—Ի՞նչխ էնիմ, թը էրթամ սիվ դեի հիւք (յօգնութիւն), սըւտակ դիվ մեղք ի, թը էրթամ սըւտակ դիվուն հիւք, վախենամ սիվ դիվ դմի սպանը. բարիւ տըտամ վուվ դիմ բարիւ առըց, կերթամ անու կը հօգնիմ:

Գինաց բարիւ խուռ, սըւտակ դիվ բարիւ առըց: Տղէն սիւտակ դիվուն էսաց.

—Գիւ մի՛ կուրըր, աս գիւր իս տի կուրիմ:

Անուշ շախ իրի կուր, սիւ դիվու մատացաւ, թուրմ՝ իզարի, գլեօխ կտուց:

Չգլեօխ օր կտուց, գլեօխ բանձըցաւ—բանձըցաւ: Սըւտակ դիվ զԱնուշ շախ դըմըշկից.

Օր դըմըշկից, էսա տեղէն մէկ կէս սահաթուայ ճանբախ դինաց:

Աղիւ գլեօխ վիւրուց իկաւ դիվու ճանդըկի վրէն, տարաւ յանդիւթը:

Անուշ շախ դարձաւ սըւտակ դիվու մօտ:

Էսաց.—Պէ՛բաղդ. իս քիւ նայար սպանըցըր, դիւ ի՞նչ էրիւր խա ձի:

1799
42



Սըւտակ դիվ էսաց.—Տեսա՛ր, անու գլխօր
դպաւ անու ճանդաղը վերէն, տարաւ հանգիւթք.
Ես քի չի դմշկըլը՝ դքի տանէր հանգիւթք:

Անուշ շախ էսաց.—Էրի՛, էրթամք:

Դիվ էսաց.—Իս չըմ կիւշի գեայ:

—Ինչո՞ւ չըս կիւշի գեայ:

—Իմ խէր էրկու կնրկ բերի, իս յառաջի
կընկնրց իմ, ասրկ յեաքի կընկնից Ե. մինք աղբէր
կնք, մէկ մօրէ չընք, անու մէք սաղ Ե. ան լսէ՛
Ես անու լսած սպանիք իմ՝ ըղի տ՛ուտէ:

Էսաց.—Ըղի շանք տու. իս կերթամ.

Էսաց.—Իս չըմ կիւշի գեայ, շանք տայ քի:

Էսաց.—Ճանըմ՝ էրի՛ սարը գլխօխ, դատու
տեղէն շանք տու՝ իս էրթամ:

Դիվ իլաւ սարը գլխօխ, շանք խտու:

Անուշ շախ դինաց—գինաց, մատացաւ,
տըսաւ պառաւմ՝ իկաւ, դԱնուշ շախ տ՛ուտի:

Անուշ շախ թուրմ՝ իղար, գլխօխ կտուրց,
առըց երի, իդի յէռջև դիվուն, էսաց.

—Ա՛ռ անու գլխօխն էլ:

Սըւտակ դիվ էսաց.—Քեանի ջիւր կայ իմ
յաչքեր, իս ընըմ քի խղմէթքեար:


Իլան գեացըն սըւտակ դիվու տուն:

Դիվ էսաց.—Անուշ շախ, դէւր տ՛երթաս.
քիւ դուրծ կնչ ի:

Անուշ շախ յիւր կատէն դիվուն խամար
էրաւ. —Իս տ՛երթամ յիտիւ աղջկան, Չինաց
թագեաւուրը քեաղաք:

Առաւուտուն դիվ, Անուշ շախ, ընկեան
ճամբախ գեացըն:

Մէկ քեանի աւուր ճամբախ գեացըն, Անուշ



շախ էսաց. — Դիվ, իս անօթի իմ, տ՛երթամ
անա դեդ.

Էսաց.—Գինա՛. եօթ օր քի մեօճլէթ, եօթ
օր կնչ կը լըմենայ, կգեաս:

Անուշ շախ իլաւ, գինաց գեդ.

Գեդական կնչ դԱնուշ շախ տըսան, տըրցըն.

—Ասի կտրիճ մարդ ի, տանըք Վառըկ
Վարդանի կօնախ (հիւր), Վառըկ Վարդան
գեայ, կըռուըն էրկուտ, դանըր Վառըկ Վարդա-
նը սպանը, աղատիընք մօտէն.

Վառըկ Վարդան զօրպա մարդ էր, ամին
տարը դօւրուլէն նախուրդ կընըր, ամին յերկուն
կզմ՝ աը մուրթէր, դարկէր ըռըմի ծէր, գնէր վար
թըլին, բերեր տուն, էիէր, ուտէր: Մէկէլ օր
էլմ՝:

Անուշ շախ տարըն Վառըկ Վարդանի տուն:

Անու աչք յընկաւ Վառըկ Վարդանի կնկեայ.

Իլաւ խաց խտու կնրկ, էսաց.

—Ին՛, դքի փաթըթիմ խըսըր, դնիմ յիտիւ
դօան, յերկուն Վառըկ Վարդան չգեայ, դքի
սպանը:

Անուշ շախ փաթըցեց խըսըր, իդի յիտիւ
դօան:

Անուշ շախ տխաւ Վառըկ Վարդան իրի,
կզմ՝ զարկի ըռըմի (տէգ) ծէր, առըց երի, տարըց
տուն, կրակ էրաւ, իփից, նտտաւ կուտը:

Գեդական թափան փենճերտտաննու յեռջև,
տըրցըն.—Տանանք Վառըկ Վարդան, ան մարդ
կնչ տ՛էնին.

Տըսան ըան. ման չկայ, տըրցըն.

—Երգմ՝ չասընք՝ էսա մարդ խըսըրէն դիւս
չըլնը:

Վառըկ Վարդան, դիւ կարմրեցցու զեղնիւր,
 Կի՛ն աւըլուց տա՛ր, թալ վար Անուշ շախին.
 Վառըկ Վարդան, դիւ կարմրեցցու զեղնիւր,
 Կի՛ն աւըլուց տա՛ր, թալ վար Անուշ շախին:
 Անուշ շախ էսաց.— Ասրի էրդիւր ասըցըն իմ
 վրէն, զիւս գեամ խորընց:

Անուշ շախ դիւս իկաւ.
 Վառըկ Վարդան, Անուշ շախ, առըն յի-
 րելուր, կռուան մինչիւ եօթ սրճաթ.

Էն տան յիռջիւ անիւց ձեռ օտաց կը հա-
 ժուէր:

Անուշ շախ ինչ քան թուր ի զար, չըռնի
 զլըշ (անձ) Վառըկ Վարդանի:

Անուշ շախ զՎառըկ Վարդան բռնից, տա-
 րաւ սեան մօտ, ձեռ խոու սուն, վիրուց, ձեռ
 մ'էլ զՎառըկ Վարդանի զլեօխ կօնից, սեան տակ
 իղի, սուն իթուղ վերէն, քիչ թափ խոու.— Թափ
 խոու, մեռաւ:

Անուշ շախ քեշից զՎառըկ Վարդան, տա-
 րաւ դիւս, իկաւ Վառըկ Վարդանի կնրի առըց,
 նստաւ:

Եօթ տարը մնաց էդա տեղ:
 Վառըկ Վարդանի կնրի իլաւ տղեօվ:

Անուշ շախ օրերուց մէկ օր էսաց.

— Կնրի, իս ա'էրթամ, իս եօթ օր էր (էի)
 խօսէ, էսա իլաւ եօթ տարը. իմ բազպանդն էլ
 կտամ քի թէ ձը աղջըի իլաւ, բազպանդ կը
 ծախըք, զիւ, իմ աղջըի կուտիք մինչիւ մեռնելիւ
 ժամանակ, ձի խերիք ի. թէ լաճ իլաւ, անուշ
 կը դնըս Տիւլիւն շախ, կապըս ձեռաց աջ թիւի
 վերէն, խրիս գեայ իմ յառէջ:

Անուշ շախ թուղ ի տու, գինաց դիվու մօտ.
 տըսաւ, ինչ տըսնի, դիվ մինչիւ չուքեր խուղը
 մէջ գեացըր:

Դիվ որ տըսաւ զԱնուշ շախ, էսաց.

— Իս քի ասըցը «մինչիւ եօթ օր լմենայ,
 գեաս», ասըկայ իլաւ եօթ տարը.

Էսաց.— Եօթ տարը չի, եօթ օր ի.

Դիվ էսաց.— Զէ՛ եօթ տարը իլաւ:

Իլան գեացըն ծովու բերան:

Դիվ Անուշ շախին էսաց.

— Կերթաս, էսա քեար կը վիրուցիս, ձիու մ'
 կեամ կայ ան քեարը տակ, ան կեամ կտաս
 ջիւր, ծովու խրեղէն ձիւ կէշը, կգեայ, ադ կեամ
 կընցընիս ձիու բերան, ձըն կը խիծնիս՝ էրկինք
 տ'ամբի, կարկուտ գեայ, բռնը խեղեղ. որ բռնը
 խեղեղ, ձըն թուղ, փախի, յիլի չնարը ծառ:
 Էդա ջիւր կգեայ, կերթայ, կը մնայ անու յետքի
 քեամիր. յետքի քեամիր ինչ կիւգեայ, էրկու
 ապուկէ (ապակեայ) կուժ կառնըս, ադ ջիւր մէջ
 կը լըցընիս, բերան կը գուցիս, կառնըս, կերթաս,
 կանչս.— Կէքիմ, հայ Կէքիմ, Խապար կտան
 թագեաւուրըն, կառն՝ Կէքիմ իկաւ, ան էլ կա-
 սը՝— չըմ ուղի Կէքիմ, թուղ էրթայ, Յիտքէն թա-
 գեաւուր էլմ' տ'ասի, կանչիցէք, թուղ գեայ,
 100 դշ. էլ անու ընը: Կը դառնաս, կերթաս,
 կասըս, թագեաւուր ապրած կէնայ, ինչ կտաս
 ըզի, քիւ տղէն սաղացնիմ, Անիկ տ'ասը. իմ խու-
 գըն, իմ խարս, իմ տղէն չէ, մէկ էլ ինչ կու-
 զիս՝ կտամ, Դիւն էլ ասա՛. քիւ խարսն էլ, քիւ
 խուղըն էլ, քիւ տղէն էլ պերոդ կէնայ քի, իս
 քինէ կուզիմ Գուրկիկ ճալալին, թուր կէժակին:

զին սատաֆին, Թամբ...

Անուշ շախն էր, գինաց քեար շուռ ի տու՝ կեամ քարը տակէն ի խան, տարաւ ի տու ջիւր, խրեղէն ձըն ջրուց իկաւ գիւս, ձըն բոնից, կեամ իգի ձիւր բերան, ձըն խեծաւ, ծովու մէջէն գինաց:

Գինաց—գինաց, ծովից գիւս իլաւ, որ ծովից գիւս իլաւ, ձըն իթուդ, որ ձըն իթուդ, էրկընք ամպից, կարկուտ իրի, իլաւ խեղեզ, որ իլաւ խեղեզ, էդի վախաւ, իլաւ չնարը ծառը, Որ իլաւ չնարը ծառ, էդ ջիւր իկաւ, գինաց, մնաց յիտքի քեամ:

Գինաց էրկու ապուկէ կուժ առքց, իրի աք քեամքեամուկ մէջ իլից, առքց, գինաց:

Գինաց, կանչըց.—Հէքիմ, հայ հէքիմ, հէքիմ, հայ հէքիմ:

Իսպար տարըն Թագեաւուրըն հէքիմ իկաւ: Թագեաւուր էսաց.—Գեացէք, ասէք թը էրթայ, չք ուղի, ինչքան հէքիմ իկաւ, հոգուտ չիրաւ, Հէքիմ յիտ դարձաւ:

Թագեաւուր էսաց.

—Թուդ գեայ, խարուր դը. Թուդ անու ընը, կանչըցըն.—Թագեաւուր կասը. Թուդ գեայ:

Գինաց Թագեաւուրը մօտ, էսաց.

—Թագեաւուր ապրած կենաս, ինչ տաս ըզի, քիւ աղէն սաղացըցիմ:

Թագեաւուր էսաց.—Իմ խուզին, իմ խարս, իմ աղէն չէ, մէկն էլ ինչ կուզիս, տրտամ:

Իսաց.—Իրեքն էլ պիրոզ կինան քի իս քինէ կուզիմ Գուռկիկ ճալալըն, Թամբ սատաֆին, Թուր կէծակին:

Թագեաւուր էսաց.—Քիւ ստողը բերան կուտուրը, ինչ քի ստը, Իս ան տամ, խարան էլ տրտամ, խուզին էլ տրտամ, աղէն էլ տրտամ, էլ չէ, չք կէրի էնը, Տղէն սաղացըցու, տամ, Անուշ շախ էսաց.—Տղէն բերէք աս սե:

Տղէն բերըն, տրտաւ, անու լըշ ամին որդնիր ի, բերան ըզու որդնիր:

Դիւ խուռ էդա ջիւրը, Թեմիզմ վլաց, պարկացըցուց Թորվան վերէն, էկաւ, անգամ մ'էլ վլաց, էլմ' պարկացըցուց Թորվան վերէն:

Տղէն սաղացաւ, առաջուց աւելի տանա աղէկ իլաւ:

Քուռկիկ ճալալըն, Թուր կէծակին, Թամբ սատաֆին իրի իրան:

Թուր կէծակին կապից, Թամբ սատաֆին իդի, զձըն խիծաւ, ձեռ խուռ դաղջկան թիւ, վերուց, իթալ յիւր քեամակ, քշից զձըն, գինաց, Չիչանըն էլ յիլան, իտեէն ընկեան:

Անուշ շախ իրիք օր, իրիք գիշեր կուլ խուռ, գինաց, Չըն էսաց.—Մէկ ճարըմ' գնալի, աս օր իլաւ իրիք օր, դիւ—էրկու ջան իմ քեամիկ վերէն էք, իս անօթը, ծարաւ, գիւ կուլ կէնիս: Անուշ շախ երդ կասը:

—Բերդիքմ' կուզիմ քեարեղէն:

Բատան բոլոր պղնձեղէն:

Դունիկ վերէն սատաֆեղէն:

Տամ զիմ ամանաթ:

Դառնամ կուռ վերէն:

Սրտակ գիվ իկաւ, էսաց:

—Իս բերդիքմ' իմ քեարեղէն:

Բատան բոլոր պղնձեղէն:

Դռնիկ վերէն սատաֆեղէն,
 Քիւր տու զաղբօր ամանաթ,
 Դարձի քիւ կուու վերէն: — Անուշ շախ զաղ-
 ջըկ չկնշխցաւ տէր:

Իրիք օր երկք գիշեր էլ կուու խտու:
 Ձըն էսաց: — Ճարէմ՝ դնախ, աս իլաւ վից
 օր, վից դըշեր, իս անօթը ծարաւս դիւ կուիւ կի-
 նիս էրկու ջան իմ քեամիը վերէն, մէկ իջեցէք,
 մէկ էլմ մնացէք: Անուշ շախ էսաց:

— Բերդիքմ՝ կուզիմ պղնձեղէն,

Դռնիկ վերէն սատաֆեղէն,

Քիւր տամ աղբօր ամանաթ,

Դառնամ իմ կուու վերէն:

Սըւտակ դիվ էլմ՝ իկաւ աղ տե:

— Իս բերդիքմ՝ իմ պղնձեղէն,

Պատան բոլոր մըւրըղեղէն,

Դռնիկ վերէն սատաֆեղէն,

Քիւր տու աղբօր ամանաթ,

Դարձի քիւ կուու վերէն:

— Անուշ շախ էլմ՝ չէտու, իրիք օր երկք դը-
 շեր էլն կուիւ էրաւ, ձըն էսաց:

— Անուշ շախ, մէկ ճարէմ՝ դնախ, էսա իլաւ
 ինն օր, ինն դըշեր, կուեան ըղե էլ, զքե էլ տըս-
 պանին, զաղջիկն էլ տը տանին: Անուշ շախ էսաց:

— Բերդիքմ՝ կուզիմ արծըթեղէն,

Պատան բոլոր քարեղէն,

Դռնիկ վերէն սատաֆեղէն,

Քիւր տամ աղբօր ամանաթ,

Տառնամ իմ կուու վերէն:

Սըւտակ դիվ էլմ՝ իկաւ էսաց:

— Իս բերդիքմ՝ իմ արծըթեղէն,

Պատան բոլոր քարեղէն,

Դռնիկ վերէն սատաֆեղէն,

Քիւր տու աղբօր ամանաթ,

Դարձի քիւ կուու վերէն:

Անուշ շախ էլմ զաղջիկ չէտու: Իրիք օր,

երկք դըշեր կուիւ էրաւ, էլմ ձըն ասըց: — Անուշ

շախ, մէկ ճարէմ՝ դնախ, թէ չէ՞, բարեօ՞վ չգնաը-

նիս, ալ իս չըմ կէրի կուիւ էնը, միայ կուեան

զքե կուպանըն, զը էլ, զաղջիկն էլ կը տանըն:

Անուշ շախ էլմ էսաց:

— Բերդիքմ՝ կուզիմ ոսկեղէն,

Պատան բոլոր արծըթեղէն,

Դռնիկ վերէն սամասա քարեղէն,

Լիւսնակ տամ էրեզական ամանաթ,

Դառնամ իմ կուու վերէն:

Սըւտակ դիվ էլմ՝ իկաւ, էլմ՝ էսաց:

— Իս բերդիքմ՝ իմ ոսկեղէն,

Պատան բոլոր արծըթեղէն,

Դռնիկ վերէն սամասա քարեղէն,

Լիւսնակ տու էրեզական ամանաթ,

Դարձի քիւ կուու վերէն:

Դիվ որ «էրեզական» էսաց, աղջիկ խտու

ամանաթ, զարձաւ յիւր կուու վերէն:

Անինք թուղ կըուըն, միք խապար տանը

Վառըկ Վարդանի կնկեանուց,

Վառըկ Վարդանի կնըկ՝ լաճմ էր բերե

Անուշ շախից, Էդա լաճու անուս իդե տէրտէր

Տիւլիւն շախ:

Էդա լաճ միճացաւ, օրէն մէկ մօր էսաց:

Մարէ՛, ձի խէր չիլի:

Էսաց: Քիւ խէր իրի աս տե, զքե վաստը-

կից՝ գինաց:

Էսաց. — Աղէ՛կ, անու նշան չկէ՛ր:

Էսաց. — Անու նշան աս բազպանդն ի. ան օր ինչ տ'էրթէր, էսաց. «Թա քզն աղջըկ իլաւ, աս բազպանդ կը ծախիք, կուտիք մինչիւ մեռնելու ձի խերքը ի» էսաց. «Թը լաճ իլաւ, կը կապիս վար աջ թիւըն, խրկիս գեայ իմ յառէջ»:

Տղէն էր իլաւ, բազպանդ կապից վար յիւր թիւի. գինաց էրա ծուլու ըրան, քինաւ, ինչ խէր քինիւր իր: Չիչանք էիըն, տըսան, բազպանդ արձկիցըն, կապըցըն խալաւքերու տակ, խանըցըն վի:

Չիչանք ասըցըն. — Մարդ՛ կայ աս տե, գքիւ խէր սպանիւր ի. էրթանք վերէն կուիւ:

Տիւլիւն շախ էսաց.

— Ո՛ր իմ խէր սպանիւր ի ի տ'էրթամ վար անու կուիւ մարդ տը չգէք, իս մ'նակ տ'էրթամ:

Առաւուտուն Տիւլիւն շախ գինաց կուիւ:

Անուշ շախն էլ էնա կանից իկաւ կուիւ:

Ան տե Անուշ շախ, Տիւլիւն շախ առըն յիրար: Անուշ շախ չկէրցաւ դարպ (հարուած) դարկէր:

Տիւլիւն շախ անծախ իլաւ յիւր պառաւան (անձնապաշտպանութիւն):

Անուշ շախ չիթուղ իրան դարպ գպնը:

Տիւլիւն շախ աճամի (անփորձ) էր, չիր կէրի գանի, որ դանէր, մէկ դարպէն կիցդէր, կապանէր:

Չանք յիւրուն կուուան. յիւրուն Տիւլիւն շախ դարձաւ, իկաւ Չիչանց մէջ, Անուշ շախն էլ դարձաւ, գինաց իրա տեղը, մաղտէն էրաւ (մտաստանջութեան մէջ ընկաւ) խոթուեցաւ):

Կնըկ էսաց. — Աս օր ինչո՞ւ մաղտէն իրիւր իս.

Էսաց. — Ի՞նչիս մաղտէն տը չէնիմ, աս օր

մէկ ջհեւիկիմ՝ իկիւր իմ կուիւ, իս չըմ կըցի անու դարպ դարկիւր. անծախ իլիւր իմ բնձի պառաւան. չըմ թուղի ձի դարպ կպըցը. ան ջհեւիկն էլ աճամի էր, աճամի չէլնիւր, մէկ դարպէն էնի կապանէր. իս գըտիմ, առաւուտուն ըզի տըսպանի:

Կնըկ էսաց. — Դիւ անու պառկած տեղ գտիւ. Էսաց. — Գտիմ:

Կնըկ էսաց. — Անիւնք խաղար—խաղար ին, դիւ մ'նաւուր իս. դիւ ան մէկ գըշիւր գինա՛, դեաղտի սպանի:

Անուշ շախ գըշիւր գինաց, տըտու Տիւլիւն շախ վար քեամիին պառկի, քնիւր ի:

Թուրմ՝ իզար տղի փուրու վերէն.

Թուր կէծակէն էր, կառից, էրաւ էրկու կտուր:

Տղէն աչքիւր իբաց.

— Աղէ՛կ, դիւ ըզի սպանիցըր, դիւ իմ խօր ձեռնէն ընդո՞ւր տ'ազատուըս:

Էսաց. — Գիւ խօր անուն ինչ ի.

Էսաց. — Իմ խօր անուն Անուշ շախ ի.

Անուշ շախ էլաց, իտու վար յիւր գլխուն. — Իմ աչքիւր կուրցուցըր, իմ աղէն սպանիցըր. իս քիւ խէրն իմ:

Անուշ շախ տղի կտուրքիւ կըգից, առըց, տարաւ աղջկայ մօտ.

— Աղէ՛կ շէրաթ էրըր վար ձի, իմ աչքիւր կուրցըցըր, իմ աղէն սպանըցըր:

Աղջիկ էսաց. — Խուզը կայ ինի.

Էսաց. — Խուզը կայ ինի, յըմա ինչ ա՛էնիմ, արմեռնը.

Էսաց. — Բի՛ մա ձի, մա ձի դեղ շատ կայ:



Անուշ շախ էսաց.— Դիւ Չիչանց թաղեա-
լուրի աղէն կասըս՝ ան քեամքեամուկ չեղնէր,
ան չըր սաղանայ:

Աղջիկն իբի լուաց, դեղմ՝ ցանքց վերէն,
կտուրնիւր ըրաւ յերար, պարկացուց վար թոր-
վան. էկան դեղմ՝ էլ իթալ վերէն, յառաջէն
դահա աղիկ իլաւ:

Խէր, աղէն իլան, դեացըն Չիչանց վերէն
կուիւ: Չիչանք կուտուրիցըն, դարձան էկըն:

Սըւտակ դիվ, Անուշ շախ, Տիւլիւն շախ,
ըզաղջիկ առըն, էկըն Վառըկ Վարդանի կնիկայ
մօտ: Վառըկ Վարդանի կնիկն էլ առըն, էկըն
Բարակ շախի մօտ:

Անուշ շախ իզար, սիւ դիվ սպանից:

Բարակ շախ, Անուշ շախ, Տիւլիւն շախ,
Սըւտակ դիվ, Վառըկ Վարդանի կնիկ, առըն
զաղջիկ, գինացըն Բարակ շախի լօր մօտ:

Առօր, փառօք զաղջիկ պսակին Անուշ շախի
վերէն:

Ան տեղ եօթ օր, եօթ գըշիւր խարանիս
դրին, կերան, խման:

Անիւնք խասան ուրինց մրաղ. դիւքն էլ աս-
տե խասնիք ձի մըրաղ:



487



11946

2013

